CENTRAL BANK
OF THE REPUBLIC OF ARMENIA
**CHAIRMAN**

ЦЕНТРАЛЬНЫЙ БАНК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
**ПРЕДСЕДАТЕЛЬ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ
**ՆԱԽԱԳԱՀ**

6, Vazgen Sargsyan str., 0010, Yerevan
Tel.:(37410) 583 841
Fax:(37410) 565 496

0010, Երևան, Վազգեն Սարգսյան, 6
Հեռ. (37410) 583 841
Ֆաքս (37410) 565 496

0010,Ереван, Вазгена Саркисяна,6
Тел.: (37410) 583 841
Факс: (37410) 565 496

19.07.2012 N 08-07/000719-12
04.07.2012 Ձեր N ՇՀՆ/ԶԽ-3-1/4813-12

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար պարոն Արտեմ Ասատրյանին

Հարգելի պարոն Ասատրյան

«Հայաստանի Հանրապետության զբաղվածության 2013-2018 թվականների ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության արձանագրային որոշման նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը ողջունում է Հայաստանի զբաղվածության ոլորտի զարգացմանն ուղղված ռազմավարության մշակումը և կարևորում փաստաթղթում ներկայացված զբաղվածության քաղաքականության բարեփոխումների հիմնական թիրախային ցուցանիշների ապահովումը:

Ընդհանուր առմամբ, զբաղվածության ոլորտը հանդիսանալով երկրի ընթացիկ և հեռանկարային զարգացման առաջնահերթ ոլորտներից մեկը, կարևոր ենք համարում փաստաթղթում ներկայացված միջոցառումների արդյունավետ իրականացումը, որոնք կնպաստեն երկրում սոցիալ տնտեսական իրավիճակի կայունացմանը և տնտեսության երկարաժամկետ զարգացմանը:

Հայաստանի Հանրապետության զբաղվածության ոլորտի բարեփոխումներին ուղղված ռազմավարության մեջ արտացոլված միջոցառումները, ըստ էության, ընդգրկուն են և համակարգված, ուստի ներկայացված փաստաթղթի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունենք:

Հարգանքով՝ Արթուր Ջավադյան

Կատ.՝ Մ.Գրիգորյան
հեռ.՝ 592894